

---

---

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԹՎԱԿԱՆԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵՎ  
(Վարկած)

Առ այսօր հրապարակված արձանագրություններում տեղ են գտել բնագրեր, որոնց վերձանությունը կարիք է զգում նոր մեկնաբանությունների: Երեք բնագիր և չորս նորահայտ արձանագրություններ դարձել են սույն հոդվածի քննարկման առարկա:

Եղվարդի Ս. Աստվածածին եռահարկ դամբարան-եկեղեցու շինարարական վկայագիրը զետեղված է առաջին հարկի մուտքի կիսակլոր բարավորին, բացառիկ վայելչագիր տառերով.

Ի ԹՎ(ԻՍ( ԶՀ (1321)  
ՇԻՆԷՑԱԻ ԵԿԵՂԵՑԻ(Ս(:

Հրատ. Հ. Շ ա հ ի ա թ ու ն ե ա ն ց. Ստորագրություն Կաթողիկե Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 126, Ալի-ջ ա ն. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 197, Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Ազիզբեկենք և նրանց շինարարական գործը. – Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921–1922, էջ 182, ծանոթ., Հ. Ե դ ի ա զ ա ը յ ա ն. Եղվարդի Մեծ և Փոքր վանքերը և գյուղի մյուս կարևոր հուշարձանները. – «Էջմիածին», 1962, Է, էջ 50:

Այս արձանագրության կապակցությամբ մեր դիտարկումները վերաբերում են թվականին:

Հ. Շահխաթունյանցն այն կարդացել է ԶՀ (1321), Ալիջանը, քաղելով նախորդից՝ կրկնում է նրան: Գ. Հովսեփյանը թվականը կարդում է ԶԾ (1301), նշելով, որ «Ծ-ն գրուած է փոքր-ինչ Հ-ի ձևով», այդ պատճառով, ըստ նրա, Շահխաթունյանցը վերձանել է ԶՀ (1321): Հ. Եղիազարյանը Զ-ից հետո վերձանելով Հ, նույնպես թվականը համարում է 1321-ը: ԶՀ թվականը, ըստ Շահխաթունյանցի, Ղ. Ալիջանի և Հ. Եղիազարյանի, հիմնավորվում է դեռևս Շահխաթունյանցի կողմից «սինագարդ կաթողիկէի վերա, սպիտակ դեղով գրուած «ի թուին ԶՀԷ. շինեցաւ» արձանագրությամբ, որը Գ. Հովսեփյանը չի տեսել: Եղիազարյանի խոսքից՝ «գմբէթի ներսում ներկագրով», չի հասկացվում ինքը այն տեսել է, թե օգտվել է Շահխաթունյանցից: Գ. Հովսեփյանը գտնում է, որ Շահխաթունյանցը «տասնաւորի ընթերցանութեան մէջ սխալուած պիտի», հատկապես, որ «ըստ

Եղվարդի անտարանի յիշատակարանի 1318 թուին եկեղեցին կազմ և պատրաստ էր, կույսերով բնակեցրած»:

Սակայն տարակույս է հարուցում մի հարց. նախորդ հեղինակներից ոչ ոք չի անդրադարձել այն իրողությանը, որ թվականի Հ տառի (փորագրված շրջված Շ-ի ձևով) կիսակլորի վրա շատ որոշակի փորագրված է Կ, այսինքն՝ գործ ունենք ՀԿ կամ ԿՀ կցագրի հետ: Այսօրինակ Հ-ն (շրջված Շ) ոչ մի կասկած չի հարուցում (որ Հ է), քանի որ այն ճիշտ նույն գծագրությամբ հանդիպում է եկեղեցու այլ վիմագրերում ևս, օրինակ Շահիկ վարդպետի անվան մեջ (գրչ. 1): Ըստ այդմ՝ զարմանալի է Գ. Հովսեփյանի Ծ վերծանությունը:

Թվականն այնքան անաղարտ է պահպանված, որ կասկած չի կարող լինել 2, Հ, Կ տառերի իսկության նկատմամբ: Սակայն հարկ է նշել, որ մեզ ծանոթ վիմագրերում չեն հանդիպել կցագրված թվատառեր, բացառությամբ մի քանի դեպքերի, երբ, օրինակ, 2, Շ կամ Ծ տառերի կլորի մեջ փորագրվել է տառ: Սակայն առավել արտառոցը երկու տասնավորի՝ Հ (70), Կ (60) միասին հանդես գալն է (գրչ. 2): Ամբողջ շինարարական արձանագրության գրչագիրը տե՛ս գրչ. 3:

Պարզ տրամաբանությամբ, հնարավոր է փորագրողի սխալմունք՝ Հ-ի փոխարեն Կ կամ հակառակը, այսինքն՝ եկեղեցու կառուցումն ավարտվել է 1311 կամ 1321 թթ., բայց ոչ երբեք 1301 թ.: Ստեղծված իրավիճակից ելք գտնելու միտմամբ ցանկանում ենք առաջադրել խնդրի լուծման մի վարկած, որն առերևույթ թվում է անհնարին, քանի որ ոչ վիմագրության և ոչ էլ մատենագրության մեջ հայտնի չէ նման նախադեպ: Սակայն, մեր համոզմամբ, նախադեպի բացակայությամբ չի կարելի պայմանավորել երևույթի կամ իրողության անհնարինությունը, հատկապես այն դեպքում, երբ սովյալ վարկածում առկա է որոշակի տրամաբանություն: Վարկածի էությունը հետևյալն է. ՉՀԿ կամ ավելի ստույգ՝ ՉԿՀ թվականում ամրագրված են եկեղեցու շինարարության սկիզբն ու ավարտը՝ 1311–1321 թթ.: Այս թեական հանգուցալուծումը հիմնավորում ենք հետևյալ իրողություններով. այդ տարիները համապատասխանում են եկեղեցու շինարարության մեկենասներ Ազիզբեկ Բ-ի և Վախախ ամուսնու գործունեության ժամանակահատվածին, 10 տարին նման կառույցի շինարարության համար իրատեսական է և, վերջապես, որպես անուղղակի փաստարկ՝ Կ, Հ թվատառերի կցագրման աննախընթաց դեպքը:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ արձանագրության տառաձևերը շատ նման են Շահիկ վարդպետի վկայագրին և արևմտյան ու արևելյան պատերին փորագրված վայելչագիր Շ տառերին, ինչը վկայում է դրանց նույն վարպետի կողմից և միաժամանակ փորագրված լինելու մասին: Չենք բացառում, որ հեղինակը կարող էր լինել հենց Շահիկը, որի բուռն գործունեության ժամանակը XIV դարի երկրորդ տասնամյակն է: Այդ ժամանակահատվածով են թվագրվում Շահիկի մյուս ստեղծագործությունները՝ 1314 թ. Աղղամի շրջանի Խաչեն-Դորբանդլի գյուղի մերձակայքում և 1319 թ. Երևանում (ներկայիս Աբովյան փողոցում, Երևան հյուրանոցի դիմաց) կառուցված դամբարանները:

Կեչառիսի վանական համակառույցի պատմության, ճարտարապետության ու վիմագրության ժամանակագրությունը սկզբնավորվում է XI դարի սկզբներին, ուստի դրանից վաղ թվագրվող վկայությունների ի հայտ գալը մեծ կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում:

Վանքի հուշարձաններին, մասնավորապես վիմագրությանն առնչվող վերջին տարիների մեր պրպտումների շնորհիվ հաջողվեց հայտնաբերել մի շարք նոր վիմագրեր, որոնցից սույն հոդվածում ներկայացնում ենք Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան կողմում ընկած ոչ մեծ խաչքարի կոտրված վերնամասում գետեղված արձանագրությունը: Կոթողի քիվին և ուղղահայաց խաչաթևի վերին մասի շուրջը փորագրված է հինգ տողից արձանագրություն, հետևյալ վերծանությամբ (գրչ. 4).

(Ի( ՆԲ (953) ԹՎ(ԻՄ Հ(Ա(Յ(ՈՅ, ԵՍ  
ԳՈՒԴԳԵՆ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ  
ՍՈՒՐԲ Գ(Դ(ԳՈ(Դ  
ԿԱՆԳՆԵՑԻ ԶՆ □ Ծ □ Ա  
ՆՍ ԶԱՅՍ:

Խաչքարի հարդարանքը, վիմագրի հնագրությունը համապատասխանում են թվականին: Առկա են մի քանի կցագրեր՝ ՈԲ, ԱՍ, ՍՈՒ, մի դեպք՝ նաև շրջված տառի օգտագործման՝ Բ - Ե:

Առաջին տողի միջնամասում 2-3 տառատեղ կոտրված են, սակայն պահպանված տառերի շնորհիվ կարելի է վերականգնել: Ուշագրավ է Գուրգեն անվան մեջ Ե տառի գրելաձևը (շրջված):

Քիվի ստորակա կամարի տակ փորագրված ՍՈՒՐԲ բառին հաջորդում են Գ, Ի, Դ տառերը, որոնք, մեր համոզմամբ, ԳԴԻԳՈՐ անվան հապավումն են և վերաբերում են խաչքարին: Այս ենթատեքստում գուցե և պատահական չէ, որ հետագայում կառուցված գլխավոր եկեղեցին նույնպես կոչվել է Սուրբ Գրիգոր:

Խաչքարը կանգնեցնող Վասակի որդի Գուրգենը, դատելով հոգևոր բնորոշումների բացակայությունից, աշխարհիկ անձ է, թերևս իշխանական ծագմամբ, և նկատառելով այն իրողությունը, որ X դարում խնդրո առարկա տարածքը Ապիրատյան կամ Պահլավունի իշխաններին էր պատկանում, գուցե այդ տոհմերից մեկի պայագատներից է, չնայած Գուրգեն անունն անհարազատ է այդ տոհմերին:

Հրապարակվող արձանագրությունը, փաստորեն, Կեչառիսի ամենավաղ թվագրությամբ վկայում է, որ ներկա վանական կառույցների տեղում եղել են ավելի հին եկեղեցական շինություններ, թերևս նաև գերեզմանոց:

ՏՈՎՊ ԹԵ ԱԲԴԱՀԱՍ

Հաղբատի ժամատան արևմտյան պատին, արտաքուստ, փորագրված է ութ տողից մի ուշագրավ նվիրատվական արձանագրություն: Այն տեղ է գտել Լոռվա մարզի վիմագրերն ընդգրկող «Դիվան հայ վիմագրության» հրատարա-

կության պատրաստվող պրակում: Վկայագրի առաջին հրատարակողները եղել են Ս. Ջալալյանցն ու Ռ. Երզնկյանը. այն առկա է նաև Վիմական տարեգրում<sup>1</sup>: Վիմագրի առավել ամբողջական ու վստահելի վերծանությունը ներկայացրել է անվանի հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը, իսկ Ս. Բարխուդարյանը գրեթե նույնությամբ զետեղել է իր կազմած «Դիվան»-ի ձեռագրում<sup>2</sup>:

Արձանագրությունը բավական լավ է պահպանված և թվում է, թե գիտական վերծանությունում որևէ խնդիր չկա, չնայած բնագիրը հարուստ է կցագրերով, որոնք կարող էին որոշ տարակարծությունների առիթ հանդիսանալ:

Ձեռագիրը խմբագրելիս մենք ուշադրություն դարձրինք երկրորդ տողի մի հատվածի վերծանությանը, այն համադրելով առկա լուսանկարի և գրչագրի հետ: Ստորև ներկայացնում ենք Կ. Ղաֆադարյանի, փաստորեն նաև Ս. Բարխուդարյանի և պրակի տեքստը մանրակրկիտ ու մեծ հմտությամբ խմբագրած Ս. Սադումյանի վերծանության նշված հատվածը.

...ՅԱՌԱԶՆՈՐԴՈՒԹ [ԵԱ]Ն ՏԸ ՅՈՀ[ԱՆՆԷՍ]Ի, ՄԵՔ ՏԷՐ ՏՈՎՊՍ, ԴԵՂՍ ԵԻ ՎԱՆԱ-ԿԱՆԱ...

Մեր ուշադրությունն ի մասնավորի սևեռվեց ՏԷՐ ՏՈՎՊՍ բառակապակցության վրա, որտեղ առնվազն երկու խնդրահարույց հարց նկատառեցինք. ՏԷՐ բառի այդորինակ գրությունը (խիստ սակավադեպ՝ չհասպավված, թեև նույն վիմագրում ևս երկու տեղ այն հանդիպում է ամենուր ընդունված հասպավված ՏԸ ձևով) և Տովպ անսովոր ու ցայսօր եզակի անձանվան առկայությունը:

Լուսանկարի և գրչագրերի առավել ուշադիր զննումը բացահայտեց մի շարք մանրամասներ, որոնք, մեր կարծիքով որոշակիորեն փոխում են այդ բառերի իմաստը:

Հարկ ենք համարում մատնանշել մի կարևոր հանգամանք՝ ՏԸ և ՎՊ տառերի վրա ուրվագծվում են պատիվ նշաններ, այսինքն՝ այստեղ գործ ունենք հասպավված ՏԷՐ բառի, այլ ոչ թե ՏՈ անհասկանալի տառակապակցության, հատկապես որ վիմագրերում առավել ընդունված է ՈՎ տառերի կցագրման այլ եղանակ (գրչ. 5): Այս դեպքում իմաստազրկվում է դրան նախորդող կցագիրը ՏԷՐ կարդալը: Այս կցագրի գրելաձևը թույլ է տալիս կարդալ ԱԲԸ (գրչ. 6), չնայած Ա-ի ձախ ուղղահայացի կարճության: Ուշագրավ է, որ Ջալալյանցը և Երզնկյանը Կ. Ղաֆադարյանի վերծանած ՏԷՐ-ի առաջին երկու տառերը նույնպես կարդացել են ԱԲ: Նշենք ևս մի լրացում. Ս տառի աջ ուղղահայացի վրա նշմարվում է կցագրված Տ (գրչ. 7): Արդյունքում ստացվում է ՎՊՏՍ պատվանշանով հասպավում:

<sup>1</sup> Ըանապարհորդություն ի Մեծ Հայաստան, աշխատասիրութեամբ Սարգիս վարդապետի Ջալալեանց, միարանի վանաց Սանահնի, ի 1841 ամի, Մասն Ա, Տիֆլիս, 1842, էջ 61, Հնախօսական տեղագրություն Հաղբատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի, գործ Ռոստոմ բեկ Երզնկեանց Հաղբատեցոյ (արտատպված «Արարատ» ամսագրից), Վաղարշապատ, 1886, էջ 30, Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 235–236:

<sup>2</sup> Կ. Ղ ա ֆ ա ու ղ ա ն. Հաղբատ, Երևան, 1963, էջ 164–165, արձ. 32:

Ստորև տե՛ս խնդրո առարկա բառակապակցության գրչագիրը (8) և վերծանությունը.

ԱԲԸ[ԱՀԱՄ] Տ [Է] Ը Վ [ԱԸԴԱ]Պ [Ե] ՏՄ

Հաղբատավանքի վիմագրերում Աբրահամ անունով վկայված են չորս անձ, երկուսը նվիրատու, երկուսը՝ հանգուցյալ: Վերջիններիս գերեզմանին 1231 և 1275 թթ. խաչքար են կանգնեցրել<sup>3</sup>:

Նվիրատուներից մեկը՝ Աբրահամ վարդապետը, քրոջ՝ Աննայի հետ վանքի Ս. Գրիգոր եկեղեցուն սկզբում նվիրել է երկու գիրք, իսկ հետո դուռ<sup>4</sup>: Նկատի ունենալով վերջինիս վարդապետ լինելու հանգամանքը, չենք բացառում նրա և մեր վկայագրում հիշված Աբրահամ վարդապետի նույնացումը:

ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱԳԻՐ ԳՆԹՈՒՆՅԱՑ ՏՈՀՄԻՑ

Մինչև Բագրատունյաց գահակալությունը Հայաստանում իշխող նախարարաիշխանական տների վերաբերյալ վիմագրական վկայությունները խիստ սակավ են, ուստի յուրաքանչյուր նոր հիշատակության ի հայտ գալը մեծապես կարևորվում է իր աղբյուրագիտական նշանակությամբ:

Լոռվա մարզի Գոգարան գյուղի հուշարձանների ուսումնասիրության ընթացքում բնակավայրի կենտրոնում վերջերս վերաշինված IV դարի միանավ բազիլիկ եկեղեցու արևմտյան մուտքի առաջ նկատեցինք<sup>5</sup> բաց կարմրավուն տուֆաքարից կերտված մի երկյանջ տապանաքար՝ աջ կեսը երկտող արձանագրությամբ: Տապանագիրը նույնպես կիսված է: Արձանագրված է միայն նիստերից մեկը<sup>6</sup>: Հիշատակագիրը, չնայած մասամբ հողմնահարված է և մամռապատ, սակայն հիմնականում վերծանվում է (գրչ. 9).

.... ԳՆԹՈՒՆԻ ՄԱՆԿԻԿ  
.... ԱՊԷՂ ԳՆԱՅԻ:

Այս հատվածական վիմագրի աղբյուրագիտական նշանակալի արժեքը, անշուշտ, Գնթունի տոհմանվան հիշատակությունն է, ինչը, կարծում ենք, որոշակիորեն վկայում է այդ իշխանական տան ներկայացուցիչների տեղում ունեցած տիրույթների կամ առնվազն այստեղ բնակվելու իրողության մասին: Մեր պատմագրության մեջ Գնթունի նախարարական տան տիրույթների հյուսիսային սահմանը նշագծվում է Փամբակի լեռնաշղթայից հարավ, իսկ Գոգարան գյուղը գտնվում է այդ լեռնաշղթայից հյուսիս, Բագումի լեռների հարավային փեշերին՝ չնայած աշխարհագրական ոչ մեծ հեռավորությամբ: Վերջին հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Գնթունիներին պատկանող տարածք-

<sup>3</sup> Գ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հաղբատ, Երևան, 1963, էջ 239-240, արձ. 148, էջ 240, արձ. 150:  
<sup>4</sup> Նույն տեղում, էջ 219-220, արձ. 109:  
<sup>5</sup> Հնագետ-վիմագրագետ Հուսիկ Մելքոնյանի հետ:  
<sup>6</sup> Քանի որ տապանաքարն իր նախնական վիճակում և տեղում չէ (ներկայումս հյուսիս-հարավ ողղվածությամբ է), ուստի չենք կարող նշել, թե աշխարհագրական որ ուղղվածության նիստին է գրված:

ների հյուսիսային սահմանը կարող էր լինել Բագումի լեռնաշղթան: Ուշադրության է արժանի «մանկիկ» բառի օգտագործումը, որը մեզ հայտնի առայժմ միակ վիմագիր վկայությունն է: Մատենագրության մեջ այն հիշատակված է քանիցս՝ Ագաթանգեղոս, Բուզանդ, Դրասխանակերտցի և այլուր: Դատելով այդ վկայություններից, «մանկիկ» բառեզրով արտահայտվել է արական սեռի երեխա իմաստը: Ըստ այսմ, մեր տապանագրում հիշված է Գնթունյաց տոհմին պատկանող տղա երեխա: Երկրորդ տողի պահպանված սկզբնահատվածի Ա-ՊԷՂ տառակապակցությունը բառի վերջավորությունն է:

Առանձնակի կարևորվում է վիմագրի թվագրման խնդիրը: Դրա համար հիմք կարող են հանդիսանալ երեք հանգամանք՝ տապանաքարի ձևն ու հարդարանքը, տառաձևերը, և Գնթունյաց տոհմի ներկայացուցիչների հիշատակությունների ժամանակագրությունը:

Երկլանջ տապանաքարերը հայոց մեջ հայտնի են վաղ միջնադարից: Դարերի ընթացքում դրանք կրել են որոշակի փոփոխություններ, ինչը վերաբերել է հիմնականում լանջերի հատման անկյան ձևաչափին: Այսօրինակ հնագույն տապանաքարերի (V-VII դդ.) նիստերն առավել փոփոխված են, իսկ հարդարանքը՝ պարզագույն (Դվին, Թալին, Ջովունի, Էջմիածին և այլուր): Հետագա դարերում վերին անկյունն աստիճանաբար սրվում է, և արդեն XII-XIII դարերից տապանաքարերի վերնամասը վերածվում է սուր անկյան: Հարդարանքում նույնպես տեղի են ունենում փոփոխություններ: Որոշակի մշակման են ենթարկվում նիստերի եզրագոտիները, արվում են ուղղանկյուն շրջանակներ: Սակայն հանդիպում են տապանաքարեր, որոնք իրենց ձևով ու հարդարանքով միջանկյալ դիրք են գրավում: Դրանք աչքի են ընկնում ոչ հստակ մշակմամբ, համեմատաբար փոքր չափերով: Պայմանականորեն այս տիպի տապանաքարերը կարելի է բնութագրական համարել IX-XI դդ.: Գոգարանի տապանաքարը, մեր համոզմամբ, բնորոշ է հենց այս տարբերակին:

Տապանագրի տառաձևերը թվագրման համար որոշիչ դեր չեն կարող խաղալ, քանի որ այդպիսիք հանդիպում են տարբեր դարաշրջանների վիմագրերում, այդ թվում նաև IX-XI դարերում:

Իրենց պատմական հայրենիքում՝ Նիզ գավառում Գնթունի նախարարական տան պայագատների հիշատակությունները սահմանափակվում են VII դարով: Ամբողջ VIII դարում և մինչև IX դարի 80-ական թվականները այդ իշխանների մասին սկզբնաղբյուրներում ոչ մի վկայություն չի պահպանվել: Սակայն այդ տեղեկատվական ամլությունը, անշուշտ, չի փաստում, որ Գնթունիները պատմության թատերաբեմից իսպառ հեռացել էին. հավանաբար, նրանք թուլացել, անշքացել և զրկվել էին լուրջ դերակատարումներից: Այդ ժամանակավոր անհայտությունից նրանք վեր են հառնում IX դարավերջին: Գնթունիներին տեսնում ենք Բագրատունյաց արքունիքի բարձրագույն պաշտոնյաների մեջ:

896 թ. արաբ կուսակալ Աիշինի գործերը մտնում են Հայաստան և, օգտվելով Սմբատ I թագավորի բացակայությունից, պաշարում են Կարս քաղաքը, որտեղ գտնվում էին Հայոց թագուհին և արքունի գանձերը. «Եւ պահնակ ամրոցին էր Քանանիտ յազգէն Գնդունի՝ Հասան անուն, յոյժ հաւատարիմ և հրամա-

նատար ի վերայ ամենայն տան արքայի»<sup>7</sup>: *X դարի սկզբներին Հայոց իշխանական դասում հիշվում են Աշոտ և Վասակ Գնթունի եղբայրները: 906 թ. Տաթևի եկեղեցու նավակատիքին ներկա գտնվող Սմբատ արքայի շքախմբում ներկա իշխանագուհիների մեջ, որոնք հաստատման գիր են թողնում վանքին կատարված նվիրատվությունների տակ, ի թիվս այլոց հիշվում են նաև. «Աշոտ և Վասակ Գնթունի վկայ եմք այսմ»<sup>8</sup>: Հովհաննես Դրասխանակերտցին, պատմելով Աշոտ արքայորդու «ի կողմանս Գուգարաց մերձ յամրոցն մեծ, որ ի լեզու Վրաց Շամշուղե»<sup>9</sup> գնալու մասին, նշում է, որ դեռևս Սմբատ արքան «զազգս զայնտսիկ շուրջ զամրոցան սեպհականացուցեալ էր իւր և զեղբարս երկուս՝ Վասակ և Աշոտ ի տոհմէ Գնթունեաց բերդապահս և վերակացուս նահանգին այնմիկ կացուցեալ»<sup>10</sup>: Տարածքային առումով այստեղ խոսքը Գուգարք նահանգի Տաշիր գավառի մասին է, որի հարավարևմտյան սահմանները հասնում են մինչև Փամբակ գետի ձորահովիտը<sup>11</sup>: Այսինքն՝ Գոգարան գյուղի տարածքը գտնւմ *X* դարում պատկանել է Գնթունիներին, ըստ այդմ էլ պատահական և զարմանալի չպետք է դիտել այստեղ նրանց հիշատակումը:*

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ

Կեչառիսի վանական համակառույցի բաղկացուցիչ շինություններից է Ս. Հարություն եկեղեցին, որը գտնվում է հիմնական հուշարձանախմբից մոտ 100 մ արևմուտք, միջնադարյան գերեզմանոցի կենտրոնում: Այն կենտրոնագրեթ հորինվածքով, արևմուտքից կցված փոքր ուղղանկյուն սրահով կառույց է: Եկեղեցու չափերը, ճարտարապետական նկարագիրը և տեղադրությունը մղում են կարծելու, որ այդ շինությունը կառուցվել է որպես գերեզմանատան մատուց-եկեղեցի:

Եկեղեցու ներքին մուտքի կամարի և ճակատակալի վրա փորագրված է 6 տողից արձանագրություն (սկիզբը ճակատակալին) (գրչ. 10).

ԹԻԻ ՈԿԹ (1220) ՇԻՆԵ  
ՅԱԻ ՍԲ ՅԱՐՈՒԹԻԻՆՍ ԱՌ  
Ի ՅԻՇԱՍԱԿ ՀԱՄԱԻՐԷՆ ՆԸՆՁ  
ԵՅԵԼՈՅ Ի ՔՍ ԵԻ ՇԻՆՈՂԱՅ ԻԻՐՈ  
Յ ՀԱՄԱՆԱՅ ԵԻ ԸՌՈՒԶՈՒՔԱՆԱՅ  
ԵԻ ԶԱԻԱԿԱՅ [ Ն ] ԿՏԱԿ [ ԵԱԼ ] ԵԻ ԱՐԶԱՆ ԱԻՐԶՆՈՒԹԵ [ ԱՆ ] ՍԻՐՈՅՆ, ՈՐ ԱՌ  
ԱԾ ԵԻ ԱՌ ՍԲՍ ՆՈՐԱ: ԱՄԷՆ:

<sup>7</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 182:

<sup>8</sup> Պատմութիւն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 234:

<sup>9</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, էջ 296:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Թ. Ի. Հ ա կ ո բ յ ա ն, Ս տ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Ի. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 37:

Հրատ. Հ. Շ ա հ ի ս ա թ ու ն ե ա ն ց. Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զավատացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 197, Է մ ի թ. Ծաղկաձոր և Կեչառու վանքերը.– «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1892, գիրք Ա, էջ 29, Դ. Ա լ ի շ ա ն. Այրարատ, էջ 263, Մ. Ս մ ք ա տ ե ա ն ց. Տեղագիր Գեղարքունի ծովագարդ զաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 354, Գ. Հ ն վ ս ե փ յ ա ն. Խաղբակյանք կամ Պոռշյանք Հայոց պատմության մեջ, մասն երկրորդ, Երուսաղեմ, 1942, էջ 21, Հ. Ե դ ի ա - զ ա թ յ ա ն. Կեչառիսի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները.– «Էջմիածին», 1955, ԺԲ, էջ 44:

Արձանագրությունը բավական լավ է պահպանված, և նախորդ բոլոր հրատարակիչները հիմնականում ստույգ են վերծանել այն: Միակ տարբերությունը վերաբերում է չորրորդ տողի ՇԻՆՈՂԱՅ բառին: Բացառյալ Մ. Սմբատյանցի, մյուսներն այն կարդացել են ԾՆՈՂԱՅ: Այսօրինակ վերծանությունը տարակուսանք է առաջացնում, քանի որ, եթե Շ տառը ինչ-որ ձևով կարելի էր շփոթել Ծ-ի հետ, ապա դրա և Ն տառերի միջև Ի տառի առկայությունը դժվար է չնկատել: Այս այլընթացումը վճռական նշանակություն ունի: Եթե Գ. Հովսեփյանը ափսոսանք է հայտնում, որ իրեն «տարաբախտաբար... չի հաջողվել գտնել Կեչառիսի այս փոքրիկ եկեղեցու շինողի և զավակների անունները»<sup>12</sup>, ապա նշված բառի ճշտումով պարզվում են հուշարձանախմբի ամենագողտրիկ կառույցի մեկենասները, ի դեմս Հասան և Ռուզուքան ամուսինների: Առաջին հայացքից թվում է, թե առկա է անհամաձայնություն, որ «համարեն նրնջեցելոց» հիշատակին կառուցված մատուռ-եկեղեցու շինարարական վկայագրում որպես հանգուցյալ հիշվում են նաև շինողները: Մեր համոզմամբ, խնդրի հանգուցալուծումը պայմանավորված է այն իրողությամբ, որ Հասանն ու Ռուզուքանը մահացել են հենց 1220 թ., շինարարության ավարտից անմիջապես հետո և նրանց զավակները<sup>13</sup> փորագրել են տվել սույն վկայագիրը գերեզմանատանը «ննջող» բոլոր, այդ թվում նաև նորերս վախճանված ամուսինների հիշատակին: Այսինքն՝ 1220-ը ոչ միայն շինարարության ավարտի, այլև Հասանի և Ռուզուքանի մահվան թվականն է: Բառիս ճշգրտման օգտին է նաև «ծնողաց» վերծանության դեպքում Հասանին և Ռուզուքանին բոլոր հանգուցյալների ծնող դիտարկելը:

Գ. Հովսեփյանը նշված ամուսիններին փորձում է նույնացնել Գեղարդավանքի մի անթվակիր արձանագրության մեջ հիշված անձանց հետ. «Կամաւն ԱՅ, ես ՀԱՍԱՆ, որդի Վախթանկայ, թոռն մեծին Սմբատայ թագավորագին...:Ե: ինձ, :Գ: իմ մաւրն՝ Նանային, :Բ: ՌՌԻԶՌԻՔԱՆԱ՝ կենակցի իմոյ ... (ընդգծումները մերն են – Գ. Ս.)»<sup>14</sup>: Ըստ հրատարակչի՝ քանի որ «վանքը շինուած է 1215

<sup>12</sup> Գ. Հ ն վ ս ե փ յ ա ն. Խաղբակյանք..., մասն երկրորդ, էջ 21:

<sup>13</sup> Գ. Հովսեփյանը գտնում է, որ «սրանց (Հասանի և Ռուզուքանի-Գ.Ս.) հիշատակին որդին Կեչառվաց վանքում ՈԿԹ թվին շինել է Ս. Հարություն եկեղեցին» (Գ. Հ ն վ ս ե փ յ ա ն. Խաղբակյանք..., մասն երկրորդ, էջ 62):

<sup>14</sup> Գ. Հ ն վ ս ե փ յ ա ն. Խաղբակյանք կամ Պոռշյանք Հայոց պատմության մեջ, մաս III, Նյու Յորք, 1942, էջ 45:



թուին», նույն թվին «պիտի գրուած լինի մօտաւորապէս և այս արձանագրութիւնը»<sup>15</sup>: Կարծում ենք, որ նվիրատւական արձանագրութիւնը կարող էր փորագրուել նաև հետագայում, ինչը հաստատուում է այլ փաստերով: Վերջիններս ցույց են տալիս, որ Գեղարդավանքի նվիրատուները սերում են Խաչենի իշխանական տնից (Հաթերքի ճյուղ) և Սմբատի թոռ ու Վախթանգի որդի Հասանը՝ հայտնի Հասան Կրոնավորյալի ծոռն է ու իր կնոջ՝ Օրբեյան Էլիկում իշխանի դուստր Ռուզուքանի հետ գործել են XIII դ. 50–60-ական թվականներին<sup>16</sup>:

ՁԱԻԱԿԱՅ բառից հետո մոտ յոթ տառատեղ մասամբ եղծված է, ըստ այդմ էլ նախորդ վերձանողների մոտ այն բաց է մնացել: Այստեղ մի քանի տառերի երևացող ուրվագծերը թույլ տվեցին կարդալու ԿՏԱԿԵԱԼ բառը, որի հավաստիությունը չենք երաշխավորում:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ, ՔԱՐԳՈՐԾ - ՇԻՆԱՐԱՐ, ԹԵ ԱՅՅԵԼՈՒ

Կէշառիսի վանքի որմերի ուշադիր զննումը հաճելի անակնկալներ մատուցեց: «Աչքից հեռու» մի քանի տեղերում նկատվեցին կարճառոտ հիշատակագրեր, որոնք կարող են լրացնել վանքի պատմության մասին մեր գիտելիքները:

Ս. Գրիգոր տաճարի արևմտյան պատին, ներքուստ, երեք պատուհանների անմիջապէս ներքնում վայելչագիր տառերով փորագրված է.

ԱԹԱՆԱՍ (գրչ. 11)

Նույն տաճարում, ներքուստ, հարավարևմտյան զմբթակի որմնախոյակին, գլխիվայր տառերով.

ԳՈՐԳ ԵՐԷՅ (գրչ. 12)

Առանձին անունների, երբեմն նաև անվան սկզբնատառի առկայությունը պատմաճարտարապետական հուշարձանների վրա (բացառությամբ տապանաքարերի), ցայսօր, ուսումնասիրողների կողմից հիմնականում ընկալվել է որպէս տվյալ շինության ճարտարապետի, շինարար վարպետի կամ ուղղակի շինարարության մասնակցի անվան փաստագրում: Այսպիսիք հայերեն վիմագրերում սակավադեպ չեն: Միայն սկզբնատառի նշման ցայտուն օրինակ է Եղվարդի Ս. Աստվածածին եռահարկ դամբարան - եկեղեցու երկու պատերին փորագրված Շ տառն է, որը, ինչպէս վերևում փաստեցինք, Շահիկ ճարտարապետի անվան սկզբնատառն է: Առկա են դեպքեր, երբ անունները նշվում են հապավված՝ կցագրված կամ փակագրված,

<sup>15</sup> Գ. Հ. Մ. Վ. Ա. Ե. Ս. Խաղարկյանք..., մասն երկրորդ, էջ 21:

<sup>16</sup> Բ. Ուլունբաբյան. Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, էջ 151:

ՎԴՇԱՏԻԿ


Գրչ. 1



Գրչ. 2

ՅԻՌԿ ՅՁՊ  
Շ. ԻՆԵ, ՑԱԵԿՆԻ ԳԻ ՑԻՍ

Գրչ. 3



Գրչ. 4

Ռ

Գրչ. 5

Լ

Գրչ. 6

Մ

Գրչ. 7

ԼՐՆԻԼԴԻՍ

Գրչ. 8



Գրչ. 9



Գրչ. 10

ԱՌԱՆԱՍ

Գրչ. 11

ԳՈՐԳԵՐԷՅ

Գրչ. 12

ձևով, օրինակ, Ս. Հովհաննու Կարապետի վանքի ճարտարապետ Բուտի հիշատակագրումը եկեղեցու թմբուկի արևելյան պատուհանի պսակի քարին՝ *FS*<sup>7</sup>: Բավական հաճախադեպ են ամբողջական անունների վկայությունները. Վայոց ձորի Արատեսի վանքի Արևմտյան գավթի հյուսիսարևելյան մույթի խոյակին փորագրված՝ ԳԼԳՈԼԻԿ<sup>8</sup>, Հաղարծնի վանքի սեղանատան երդիկի (ներքուստ) նիստին՝ ՄԻՆԱՄ<sup>9</sup> և այլք:

Անշուշտ, եզակի չեն դեպքերը, երբ նման ձևով հիշատակվում են նաև այլ «մասնագիտությամբ» անձինք, սակայն այսօրինակ վկայությունները հիմնականում հարկ է դիտարկել որպես շինարար - վարպետների անձնանուններ, որպիսիք համարում ենք նաև կեչարիսյան նշված վիմագրերը:

## ЭПИГРАФИЧЕСКИЕ ЭСКИЗЫ

ГАГИК Г. САРГСЯН

### Р е з ю м е

В ряду опубликованных надписей есть оригиналы, дешифровка которых нуждается в новой интерпретации. Дата строительной надписи церкви св. Богородицы в Егварде в арменоведении известна в двух расшифровках ՉՀ (1321) и ՉԿ (1301). Исследователи не обратили внимания на приписанную к букве Հ букву Կ, т. е. ՉԿՀ. В качестве гипотезы предлагается довольно своеобразно написанную дату интерпретировать как годы начала и конца строительства—соответственно 1311-й и 1321-й. У восточной стороны церкви св. Григора Лусаворича Кечарисского монастыря найден фрагмент хачкара с примечательной и важной надписью, согласно которой хачкар воздвигнут Гургеном, сыном Васака в 953 г. Это самая известная ранняя надпись монастырского комплекса. В одной из надписей Ахпатского монастыря исследователи в ряду дарителей прочли имя *Տեր Տնվլլու* (Владыко Товп). При внимательном изучении фотографии и прориси выяснилось, что этот фрагмент следует читать как *Աբրահամ տեր Վարդապետու* (Абраам владыко Вардапет). Вблизи церкви села Гогаран Лорийского марза найден обломок надгробной плиты с надписью, в которой покойный упомянут как представитель рода Гнтуни, живший, вероятно в X в. В надписи на тимпане входа церкви св. Вознесения в Кечарисе исследователи прочли слово *ծնողաց* (родителей), в то время как здесь ясно

<sup>7</sup> Հ Ն Լ Ի Ի Կ Մ Ե Լ Բ Ն Ի Ե Ն Ի Ն Ս Ի Ր Բ Հ Ո Վ Ի Կ Ա Ն Ն Ո Ւ Կ Կ Ի Ր Կ Ե Տ Ի Ի Վ Ա Ն Է Ր . – «Հանդես Ամսօրյա», 2003, էջ 202:

<sup>8</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 125, արձ. 362: Հրատարակիչը ծանոթագրում է. «Անտարակույս, գրված կարող է լինել միմիայն շինարարության ընթացքում: Ճարտարապետական այսպիսի կարևոր մանրամասների վրա կարճ հիշատակագրություններ անում են միայն վարպետները» (նույն տեղում):

<sup>9</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հո. Մ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 57, արձ. 115: Հրատարակիչը ծանոթագրում է. «Մինասր Հաղարծնի վանքի հոյակերտ Սեղանատունը կառուցող ճարտարապետ-վարպետն է: Նրա անվան սկզբնագիրը՝ Մ, տարբեր դիրքերով բազմիցս փորագրված է հուշարձանի որմերին» (նույն տեղում):

прочитывается *շինողաց* (строителей), благодаря чему становятся известны имена мастеров-строителей церкви. На западной стене церкви св. Григора Лусаворича Кечарисского монастыря, изнутри, в различных местах вырезаны два имени – *Աթանաս* и *Գորգ* (Атанас, Горг), которые, вероятно, принадлежат мастерам-строителям церкви.

## LITHOGRAPHIC-SCIENTIFIC SKETCHES

GAGIK G. SARGSYAN

### S u m m a r y

Among the rows of up to date published lithographs there are originals, the decipherment of which needs a new explanation. Three of them and four new-found lithographs are the subjects of discussion in this article. The year of the constructional inscription of St. Astvatsatsin (Blessed Virgin) church of Yeghvard is famous in Armenology with its two decipherments – ՉՀ (1321) and ՉԿ (1301). The decipherers didn't pay attention to the letter *İ* adjoining written with *Հ* that is ՉԿՀ. The author suggests as a version to comment the year written in a distinctive way as the beginning of the construction of building 1311 and the end 1321. In the eastern part of St. Grigor Lousavorich (Gregory the Illuminator) church of Kecharis monastery was found a fragment of cross-stone with noteworthy and important inscription, according to which the cross-stone was erected in 953 by Gurgen, the son of Vasak. This is the most ancient certificate of the monastery. In one of the inscriptions of Haghbatavank the previous publishers among the donators read *ՏԵՐ ՏՈՎՊՍ*. By means of the photo and careful observation of the penman it was cleared up that the fragment must be read *ԱԲՐԱՀԱՄ ՏԵՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ*. Near the church of the village of Gogaran of Lori region was found a fragment of inscribed gravestone, where the deceased is probably mentioned as a representative of the Gntunyats dynasty who lived in the 10th century. In the inscription engraved in the upper part of the main entrance of St. Harutyun church of Kecharis monastery the previous publishers read *ԾՆՈՂԱՅ*, while in that place is certainly written *ՇԻՆՈՂԱՅ*, by which the names of the building constructors of the church are cleared up. On the western wall of St. Grigor Lousavorich (Gregory the Illuminator) church of Kecharis monastery, inwardly, in different places are engraved two names: *ԱԹԱՆԱՍ* and *ԳՈՐԳ ԵՐԵՅ*, who were probably the masters taking part in the construction.